

Մ Ա Յ Բ Ա Ր Ա Ռ ՈՒ

Ամենայն Հայոց Վկանական Տ. Տ. Գիւղիկ Կարուղիկոսի հիմանդրութեան և վախճանամասն առիւ Մայր Արքուն Տեղապահ Պետ. Մեսրոպ Մրգանակին ուղղուած պաշօնապիտեան պատճենները, որնի՞ ոչ միայն հետքրութեան են իրենց այժմական տեղեկարիւններով, այլ նաև պատճական արձեի մը իր ներկայացնեն համեզուցեալ Հայրապետի կեամբի վերջարդյունի և մահուած ու բարձրած պարագաներն ենական ինչպիս նաև Մայր Արքունի և Խորհրդային Հայաստանի յարակերութեանց կողմէն:

Թ. 383

6 Մայիսի 1930 ամի

Ա. Է Հ Մ Մ Ա Ծ Ի Ւ

Երևանականի Պատրիարքական Տեղապահ Գերազինի

Տ. Մեսրոպ Եպիսկոպոս Նեանեանին

Գերագոյն Հոգեոր Խորհուրդը իր պարտականութիւնն է համարում խորունկ վըշտով յայտնելու Ձերդ Գերաշնորհութեան և Ձեր միջոցավ Երևանաղէմի պատկառելի Միաբանութեան, որ Ապրիլ ամսի 21-ից Նորին Մրգուրիւնը հիւանդ է: Բժշկական օգնութիւնը, խնամքը և հոգատարութիւնը անպակաս է և գերազանցօրէն կանոնաւոր: Թէե զրութիւնը ծանր է, իր տարիքի և ընդհանուր թուլութեան հետեանքով, բայց այնուամենայնիւ անյուսալի չէ:

Մանր ազգեց Նորին Մրգուրիւն վրայ Նորին Ամենապատուութիւն երջանկայիշատակ Տ. Եղիշէ Պատրիարք հօր մահը. և այդ բօթի հետ երբեք չի հաշտուած, ամէն օր յիշելով և արտասուելով:

Սորա հետ ուզարկելով թիմելի Առաջնորդներին ուզարկուած ըրջարերականը, Խորհուրդս խնդրում է Ձերդ Գերաշնորհութեան և պատկառելի միաբանութիւնն ներմ մաղթանքներ վերառաքել առ Ամենաբարձրեալը Նորին Մրգուրիւնը ասողջութիւն և արեշատութիւն պարզելու համար:

Եղբայրական սիրոյ ողջոյններով
Անդամ Գերագոյն Հոգեոր Խորհրդի

Մատքես Արքայիսկոպոս
Քարտուղար Յ. Քոչարեան

Ե Ր Ց Ա Բ Ա Ր Ա Ռ ՈՒ

ԲՈԼՈՐ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴԵՐԻՆ
ԵՒ ԹԵՄԱԿԱԼ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ

Թ. 384

6 Մայիսի 1930 ամի

Ա. Է Հ Մ Մ Ա Ծ Ի Ւ

Նորին Մրգուրիւն Ապրիլ Վեհափառ Հայրապետը ապրւոյ Ապրիլի 16ին փոքր ինչ վատ զգաց իրեն, բայց շատապ ձեռք առած միջոցների հետեանքով մի երկու օրից այնքան լու զգաց իրեն, որ նոյն ամսի 19ին և 20ին, ճշգրտալոյցին և Ա. Յարութեան կիւրակի օրը բարեհաճեց Մայր Տաճար իջնել: Սակայն Ապրիլի 21ից զըժրախոտաբար իրեն աւելի վատ զգաց և Գերազոյն Հոգեոր Խորհուրդը չըրաւականանալով տեղական բժիշկների խնամքով, հըրարտիկ երեանից յայտնի բժշկապետ Յովհաննես Յովհաննիսեանին, որը նորին Մրգուրիւնից հիւանդ է: Բժշկական օգնութիւնը, խնամքը և հոգատարութիւնը անպակաս է և գերազանցօրէն կանոնաւոր: Թէե զրութիւնը ծանր է, իր տարիքի և ընդհանուր թուլութեան հետեանքով, բայց այնուամենայնիւ անյուսալի բժշկական խորհուրդ հրաւիրուեց Երեանի յայտնի բժիշկների Յ. Յովհաննիսեանի, Պրօֆեսոր Արտաշէս Մելիք-Աղամեսանի, բժշկապետ Գլորիկ Սաղեանի և տեղական բժիշկ Սպիդեանի մասնակցութեամբ, որոնք Վեհափառ Հայրապետի զրութիւնը դատան լուրջ և համապատասխան միջոցներ ձեռք առան թէ՝ որտի կանոնաւորման և թէ՝ աղիքների բորբոքման առաջն առնելու համար, միանգամայն ճիշդ զանելով Բժշկապետ Յովհաննիսեանի որոշած զիտքնօքը և ձեռք առած միջոցները և նշանակուած գեղերը:

Գերագոյն Հոգեոր Խորհուրդը ամբողջ կազմով աշալլիջութեամբ և որդիքական հոգատարութեամբ հսկում եւ հետեան է բժշկութեան ընթացքին՝ տրամադրելով ամէն միջոց ևւ ջանք չը խնայելով Նորին

Մրրուրեան առողջական վիճակը վերականգնելու համար:

Գերազոյն Հոգեսոր Խորհուրդը պարագանութիւն համարելով յայտնել Զեղ վերագրեալ ցաւալի լուրը ի զիտութիւն և խօստանալով պարբերաբար տեղեկութիւն տալ Նորին Մրրուրեան հիւանդութեան դըրութեան և ընթացքի մասին, խնդրում է չերժագին մազթանքներ վերառաքել առ Ամենաբարձրեալը Նորին Մրրուրեան առողջական վիճակը վերականգնելու և երկար կեանք պարզեելու համար:

Անդամ Գերազոյն Հոգեսոր Խորհրդի

Մարքոս Արենպիսկոպոս
Քարտուղար Յ. Քոչարեան

Թ. 466

30 Մայիսի 1930 ամի

Ա. ԷջՄԹԲԱԾԲԿ

Առ Գերապատիւ Տ. ՄԵՄՐՈՊ ԵՊԻՍԿՈՊՈՍ
ՆՇԱՆԱԿԱՆ Պատրիարքական Տեղապահ Ա.
Արուոյն ԵՊՈՒՍՈՎԱՆԵՄԻ

ՆԱՐԻՆ ՎԵՀԱՓԱԾՈՒԹԻՒԹԻՒՆ հանդուցեալ Կաթողիկոսն Ամենայն Հայոց զեր իւնգանութեան ժամանակ կարգազրել էր կոնդակ պատրաստել ի ցաւակցութիւն և ի միախարութիւն սրբազումար միաբանութեանդ՝ Ամենապատիւ Տ. Եղիշէ Արքեպիսկոպոսի, Առաքելուկան Աթոռոյդ Պատրիարքի, մահուան առթիւ, բայց հիւանդութեան օրէ ցօր ծանրանելու և մահուան պատճառով մնաց անկոտար նորա կամքը: Գերազոյն Հոգեսոր Խորհուրդն իսկ չփոթուած նախ հանգուցեալ Հայրապետի հիւանդագին ծանր վիճակով և ապա ծանրաբեռնուած մահուան և թաղման հետ կապուած հոգսերով, հազիւ կարողացել էր հեռագրական կարգազրութիւն անել Խորհրդացին Միութեան սահմաններում եղած բոլոր եկեղեցիներում հոգեհանդիստ կատարել ի յիշատակ հանգուցեալ Պատրիարքի, առանց հնարաւորութիւն ունենալու Զեղ ևս, ինչպէս և սրբազումար միաբանութեանդ գրաւոր յայտնելու իր խորին վիշտն ու ցաւակցութիւնը:

Տ. Եղիշէ Պատրիարքի կորուստը Զեղ հետ և մեր կորուստն է, յանձին որի Հայոստանեայց Եկեղեցին զրկում է իւր տկանաւոր զեկավարներից մէկից, որ իւր

երկարամեայ, արդիւնաւէտ կեանքով ուսուցչական - վարդապետական, զբական-զիտական, հոգուական - վարչական պատասխանաւու ասպարէզներում թողել է երախտագիտութեան արժանի հետքեր եւ իւր անունը կազել անբաժան Հայոց Եկեղեցու կէս զարու չափ պատմութեան հետ:

Մեր եւ իշմիածնի միաբանութեան վիշտը համեմատաբար տանելի կը լինէր, եթէ Հայոց Եկեղեցու կորուստը մէկով միայն սահմանափակուէր. բայց Աստուծոյ կամքն էր որ միանգամից երկու փորձութիւն գար զեկավար Աթոռների համար, և մենք հնագանդ նորա անօրէնութեան, եղարյական վշտակցութեան մեր խօսքն ևնք ուղղում Զեղ և միսիթարութիւն բարեմաղթում: Օրհնեալ լինի հանգուցեալի յիշատակը և հաճելի պատարագ նորա կեանքը Աստուծոյ սեղսնի առջեւ:

Աղօթեցէք և Դուք հանգուցեալ Սըրբազնագոյն Կաթողիկոսի յիշատակին համար, աղօթեցէք, որ Աստուծած զօրավիկ լինի մեր հաւատացեալ ժողովուրզին և մեղ բոլորիս տանելու մեր ծանր կուռստները, և սգաւոր Աթոռների վրայ նորից բազմած տեսնելու հանգուցեալներին արժանաւոր յաջորդները:

Տեղակալ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Նախագահող Գերազոյն Հոգեսոր Խորհրդի ևուն Արենպիսկոպոս

Գերազոյն Հոգեսոր Խորհրդի անդամներ
Բագրատ Արենպիսկոպոս
Մարքոս Արենպիսկոպոս
Գարեգին Արենպիսկոպոս
Գևորգ Արենպիսկոպոս

Թ. 651

17 Յունիսի 1930 ամի

Ա. ԷջՄԹԲԱԾԲԿ

Երևալիմի Հայոց Ա. Յակոբեանց վանդի Պատրիարքական Տեղապահ Գերական Տ. ՄԵՄՐՈՊ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆՇԱՆԱԿԱՆ Պատրիարքին

Գերազոյն Հոգեսոր Խորհրդի և Մայր Աթոռոյս միաբանութեան կողմից յայտնում ենք Զեղ և Ա. Յակոբեանց վանուց սրբազումար միաբանութեան զոհունակութիւն և չնորհալիք Երջանկայիշատակ Տ. Տ. Գէմրդի Երդ Ամենայն Հայոց Կաթողիկ-

կոսի մահուան առթիւ արտայացտած ցաւ-
ւակցութեան համար :

Թէ՛ Ամենապատիւ Տ. Եղիշէ Արքազան
Պատրիարքի և թէ՛ Ամենայն Հայոց Վեհա-
փառ Հայրապետի անսպասելի մահը խորին
կոկիծ եւ անդարմանելի ցաւ պատճառեց
մեղ բոլորիս :

Երկու սպակիր և վշտակից եղբայրա-
կան միաբանութիւններս մազթենք և ա-
զօթենք, որ Ս. Հոգին Աստաւած միտիթա-
րիչ և զօրավիդ լինի մեզ բոլորիս և Աս-
տաւածային սղորմութեամբ և հոյ հաւա-
տացեալ ժողովրդի խորհրդով և օգնակա-
նութեամբ յաջողուի մեղ բազմեցնել Ս. Էջ-
միածնի և Ս. Երուսաղէմի Երկու Առաքե-
լական Աթոռների վրայ արժանընտիր յա-
ջորդներ, որ մեծ միտիթարութիւնն էր լինի
ի սփիռոս աշխարհի ցրուած հոյ համայնք-
ների :

Եղբայրական սիրոյ ողջոյններով
Ամենայն Հայոց Կաթողիկոսի Տեղակալ
Աղօթակից

Խորին Արքայիկոպոս

Թ. 756

10 Յուլիսի 1930 ամի

Ս. Էջմիածնին

Խորին Գերաքնորհութեան

Երուսաղէմի Պատրիարքական Տեղապահ
Տ. Մեսրոպ Մրգան Խպիսկոպոս

Ներփակ ուղարկում ենք Ձերդ Գերդ Գերա-
քնորհութեան հանգույցեալ Հոգելոյս Հայ-
րապետի կողմից 1925 թուի Հոկտեմբերի
22 ին հաստատուած Աղպային-Եկեղեցական
ժողով գումարելու Յատուկ Կանոնագրու-
թիւնից մի օրինակ, որպիսին ուղարկուած
է Պատրիարքարանիդ 1926 թուի Մայիս
27ի թ. 414 Հայրապետական Կոնդակի հետ :

Յայտնում ենք Ձերդ Գերաքնորհու-
թեան, որ առաջիկայ ընտրութեան առ-
թիւ գումարուելիք Աղպային-Եկեղեցական
ժողովը կազմակերպուելու, գումարուելու
և զեկավարուելու է այդ կանոնագրու-
թեամբ, որի համաձայն Ձերդ Գերաքնոր-
հութեանը հովուութեանը յանձնուած ժո-
ղովուրդը (թեմը) ընտրելու է մի պատգա-
մաւոր և Ձեր տեսչութեան ենթակայ բո-
լոր եպիսկոպոսները անդամ են Աղպային-
Եկեղեցական ժողովի (նաեւ միաբանու-

թեան մի ընտր . ներկայացուցիչ) :

Ծուասով Հնարաւորութիւնն կ'ունենանք
ուղարկելու Ձերդ Գերաքնորհութեան Հայ-
րապետական ընտրութեան հրավարտակնե-
րը : Անչափ ուրախ կը լինինք, եթէ Ձերդ
Գերաքնորհութեան զվարարութեամբ բո-
լոր պատգամաւորները նշանակեալ ժամա-
նակին ժամանեն Մայր Աթոռ :

Եղբայրական սիրոյ ողջոյններով

Ամենայն Հայոց Կաթուղիկոսի

Տեղակալ աղօթակից և սպակից՝

Խորին Արքայիկոպոս

(Պատմեն)

Հաստատեմ, 22 ն Հոկտ. 1925 ամի, Ս. Էջ-
միածնին : Վ. Հայոց Կաթուղիկոսու
Ամենայն Հայոց :

ԱԶԴԱՅԻՆ - ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ,

ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՅԱՏՈՒԿ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա.

1. Հայաստանիայց Առաքելական Ս.
Եկեղեցու Գերաքոյն հանոնազիք մարմինը
Աղպային-Եկեղեցական ժողովն է :

2. Աղպային-Եկեղեցական ժողովը զու-
մարում է Էջմիածնունում :

3. Աղպային-Եկեղեցական ժողովը հը-
րաւիրում է Ամենայն Հայոց Մայրագոյն Պա-
րիսիար Կարուղիկոպուր :

4. Աղպային-Եկեղեցական ժողովի նա-
խագահն է Ամենայն Հայոց Մայրագոյն Պա-
րիսիար Կարուղիկոպուր :

5. Տանն կիլիկիոյ Կաթուղիկոսը, Ե-
րուսաղէմի և Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարք-
ները ժողովի նախամթոռ անդամներն են :

6. Ամենայն Հայոց Կարուղիկոսի հիւան-
դութեան գէպքում, Աղպային-Եկեղեցական
ժողովին նախագահում են Սոյց Կաթու-
ղիկոսը կամ Երուսաղէմի պատրիարքը,
սոցա բացակայութեան գէպքում նախա-
գահում է Ամենայն Հայոց Կարուղիկոսի Տե-
ղապահը :

7. Աղպային-Եկեղեցական ժողովի ի-
րաւսութեան ենթակայ են հետեւեալ հիմ-
նական խնդիրները .

8. Ընտրութիւն Ամենայն Հայոց Մայրա-
գոյն Պատրիարք Կարուղիկոպուր (յետ
մահուան Անքակալի) .

9. Ընտրութիւն Ս. Էջմիածնի Գերաքոյն

- Հոգեոր Խորհրդի անդամների .
 Դ. Հաստատութիւն Ազգային-Եկեղեցական
 կան Սահմանադրութեան .
 Դ. Քննութիւն և վճռահատութիւն Եկե-
 ղեցական բարենորդչական հարցերի .
 Ե. Կարգաւորում Եկեղեցական անտե-
 ստկան վիճակի .
 Զ. Վճռահատութիւն Եկեղեցուն վերա-
 բերեալ բոլոր հարցերի :

8. Ազգային-Եկեղեցական ժողովը ինքն
 է որոշում իր զբաղմունքների օրակարգը
 և գործունեութեան ներքին հրահանգը :

Բ.

9. Ազգային-Եկեղեցական ժողովի ան-
 դամ են .

Ա. Ս. Էջմիածնի Գերագոյն Հոգեոր Խոր-
 հրդի անդամները .

Բ. Հայոց Եկեղեցու բոլոր Առաջնորդ-
 ները .

Գ. Հայոց Եկեղեցու բոլոր Եպիսկոպոս-
 ները :

Ծանօթ.— Առաջնորդի անձամբ ժողովին մաս-
 նակցիլ չկարողանալու դէպքում, մասնակցում
 է թեմի հոգեորականութեան ընտրեալ ներկա-
 յացուցիչը :

10. Ազգային-Եկեղեցական ժողովի
 անդամ են Ս. Էջմիածնի միաբանութեան,
 Ս. Երուսաղէմի միաբանութեան և Կ. Պոլ-
 սոյ Խառն ժողովի կողմից ընտրուած մի
 մի ներկայացուցիչներ :

11. Ազգային-Եկեղեցական ժողովի
 անդամ կարող են լինել ժողովրդից ըն-
 տրուած և երեսուն տարին լրացրած իրա-
 ւասու ծխականները :

12. Իւրաքանչիւր թեմի ժողովուրդ
 մասնակցում է Ազգային-Եկեղեցական ժո-
 ղովին իր ընտրած մէկ կամ աւելի պատ-
 գամաւորներով :

13. Մինչև քսանեհինգ հազար ժողո-
 վուրդ ունեցող թեմը ընտրում է մի պատ-
 գամաւոր, իւրաքանչիւր թեմը ընտրում
 է այնքան պատգամաւոր, որքան անդամ
 քսանեհինգ հազար ժողովուրդ է պարու-
 նակում իր մէջ: Վերջին 25,000ը կարող
 է լրիւ չը լինել, բայց ոչ պակաս տասն
 հազարից :

Ծանօթ. Ա. — Իւրաքանչիւր թեմ իր ըն-
 տրելի պատգամաւորների թուով ընտրում է անձ-
 նափոխանորդներ, որոնք փոխարինում են պատ-
 գամաւորներին, եթէ նա որեւէ պատճառով ան-

կարող է անձամբ մասնակցիլ ժողովին

Ծանօթ Բ.— Իւրաքանչիւր թեմ վիճակագր-
 րութեան հիման վրայ բաժանուում է ըրջանների
 այն հաշուով, որ իւրաքանչիւր ըրջան բաղկա-
 նայ քսան և հինգ հազար ժողովրդից:

14. Ազգային-Եկեղեցական ժողովի թե-
 մական պատգամաւորների ընտրութեան
 մասնակցում են հոգեորականները և քա-
 ղաքացիական չափահատութիւն ունեցող
 երկու սեռի իրաւասու ծխականներ :

15. Իւրաքանչիւր հազար շունչ ունե-
 ցող համայնքը ընտրում է մի պատուիրակ:

16. Պատուիրակները պատգամաւորին
 կարող են ընտրել իրենց միջից կամ զբսից:

17. Ազգային-Եկեղեցական պատգա-
 մաւորների, անձնափոխանորդների, պատ-
 ուիրակների ընտրութիւնը Ս. Խ. Հ. Միու-
 թեան սահմաններից զուրս գտնուող թե-
 մերում կատարուում է ըստ տեղական զոր-
 ծող Հայոց Կանոնագրութիւնների, սահ-
 մանադրութիւնների և կամ աւանդական
 կարգերի, հրահանգուելով սոյն կանոնա-
 գրութեամբ:

18. Ազգային-Եկեղեցական ժողովի
 պատգամաւորների ճանապարհածախսը հո-
 գում է պատգամաւորին ընտրող թեմը,
 իսկ պատուիրակներնը եկեղեցիները:

19. Ազգային-Եկեղեցական ժողովի
 պատգամաւորների ընտրութեան առթիւ-
 ծագած ամենատեսակ տարակուսանքների
 լուծումը տալիս է Գերագոյն Հոգեոր Խոր-
 հուրզը Ս. Էջմիածնի:

20. Կարիք գեցցուած դէպքում Ս.
 Էջմիածնի Գերագոյն Հոգեոր Խորհուրդը
 տալիս է հարկաւոր բացատրութիւններ և
 հրահանգներ :

Գ.

21. Ամենայն Հայոց Կաթուղիկոսի
 մահուան դէպքում Կաթուղիկոսի ընտրու-
 թեան համար Ազգային-Եկեղեցական ժո-
 ղով հրակում է Ամենայն Հայոց Կաթու-
 ղիկոսի Տեղապահը Ս. Էջմիածնի Գերագոյն
 Հոգեոր Խորհրդի հետ:

22. Նոր Կաթուղիկոսի ընտրութիւնը
 տեղի է ունենում Կաթուղիկոսի մահուա-
 նից ոչ ուշ քան վեց մահու յետոյ:

23. Ամենայն Հայոց Կաթուղիկոսի ըն-
 տրութիւնը կատարուում է Ս. Էջմիածնի
 Մայր Տաճարում, նախագահութեամբ Ա-

մենայն Հայոց Կաթուղիկոսի Տեղապահի:

24. Ամենայն Հայոց Կաթուղիկոսի ընտրութեան կարգը որոշում է Ազգային-Եկեղեցական ժողովը:

25. Այսին կանոնագրութիւնը իւր ոյժի մէջ է մինչև առաջիկայ Ազգային-Եկեղեցական ժողովի գումարումը:

Ա. Եջմիածնի Գերագոյն Հոգեոր Խորհրդի անդամներ, Մեսրոպ Արքեպիսկոպոս, Խորէն Արքեպիսկոպոս, Բագրատ Արքեպիսկոպոս, Պարիզին Եպիսկոպոս, Գիւտ Եպիսկոպոս:

Գերագոյն Հոգեոր Խորհրդը սոյն պատճենի խկութիւնը հաստատում է սուրբագրութեամբ և Խորհրդի կնքով 3 ն Յուլիսի 1930 տմի Ա. Եջմիածնի:

Անդամ Գերագոյն Հոգեոր Խորհրդի
(ԿԵՆՔ) Մատքու Արքեպիսկոպոս
Քարտուղար Յ. Քոչարեան

Դերաձերին

Տ. Մեսրոպ Եպիսկոպոսի Նօանեան

Պատրիարքական Տեղապահի եւ

Միաբանական Ռեխի Առաջնական
Արքունի Ս. Երուսաղեմի

Քրիստոնաւանդ սիրոյ ողջոյն

Զեր պատուական հեռագիրը, որով նուաստիս ներկայացուցիչ էլիք կարգում Մրագնութեանդ և միաբանական Ռեխուի կողմից երջանկայիշատակ Տ. Տ. Գէորգ Ե. Կաթողիկոսի յուղարկաւորութեան ժամանակ, ստացել եմ ժամանակին:

Ինձ արած պատուի համար խնդրեմ ընդունիլ չնորհակալութիւնու:

Ես համեմատարար ուշ եմ պատասխանում, որովհետեւ ցանկանում էի մի քանի նորութիւններ ևս հաղորդել, որոնց մասին Գերագոյն Հոգեոր Խորհրդի պաշտօնական հաղորդագրութիւնը թերեւս ուշ ստանաք:

Նախ՝ աւելորդ չեմ համարում մի քանի մանրամասնութիւններ հաղորդել վեհափառ Հայրապետի Հիւանդաւթեան, մասնաւուն և թագման մասին, որոնք սրբազումար հարցող կարող են հետաքրքրութիւն պատճառել:

Նորին Մրագնութիւնը իրեն տկար է ըզ-

գում Ապրիլի 16-ին, բայց չնայելով թախանձանքներին, Նորին Արքութիւնը թէ ձրագալոյցի երեկոյին և թէ Յարտիթեան պատարագին իջնում է Տաճար, Յաջորդ օրը, Ապրիլի 21-ին աւելի վատ է զգում, լուծ սասականումէ: Անմիջապէս հրաւերում են հմուտ բժիշկներ, որոնք միջոցներ են ձեռք առնում լուծը կանգնեցնելու և սրտի զործողութիւնը կանանաւորելու համար: Մինչև Ապրիլ 28-ը Ն. Արքութիւնը կարողանում էր վերելնալ իւր կարիքները հոգալու առանց կողմանակի օժանդակութեան, և իւր սովորութեան համեմատ հատաքրքրում էր ընթացիկ զործերով: Այդ օրն ստանում է երջանկայիշատակ Եղիշէ արքեպիսկոպոսի մահոււան բօթարեր հեռազիրը, կանչումէ Գ. Խ. անդամներիս և մեծ վշտով և արտասուտից աչքերով հազորդումէ հեռազիրը հեռազիրը բորտակում էր մեր փայփայած յոյսերը:

Նորին Մրագնութիւնը այդ օրից այլեւս անկարող եղաւ անկողնից վեր կենալ և յանձիս ասումէր մեզ: «Եղիշէ Մրագնուց ինձ համար ճանապարհ հարթելու»:

Հետզհետէ ոյժերը թուլացան և զգալով մօտալուտ վախճանը, Մայիսի 7-ի գիշերը կոչեց Գեր. Խոր. անդամներիս հրաժեշտ տալու և օրհնելու: Թողնում եմ ձեզ պատկերացնելու այն սրտառուչ բռպէն, երբ ամենքս զիտակցելով, որ սիրեցեալ Հայրագիտի կեանքի վերջին ժամերն ենք վայելում, արտասուքը կոկորդներիս յուսագրում էինք նորան և մեզ, որ գեռ նորին Մրագնութեան կեանքը պէտք է հայ տառապեալ եկեղեցուն, և որ զես ինքը կապրի հմուտ բժիշկների ձեռք առած միջոցների չնորհիւ: Ամբողջ գիշերը մենք անցկացրինք նորին Մրագնութեան անկողնու մօտ: Մայիսի 8-ի առաւտահան զարկերակն արդէն բաւական թոյլ էր և ձայնը նուազ: Հրաւերում բժիշկը յայտնեց, որ այլեւս յոյս չկայ: Ա. Հայրապետը ժամը 10,30-ին օրհնեց բոլորիս, միաբանութեան, հայ ժողովրդին և աւելացրեց: «Երբ հայ ազգը աւելի բախտաւոր վիճակ կունենայ, յիշեցք, որ ես նորա բարօրութեան համար

աշխատասղն եմ՝ եղելու։ Եւս ժամից յետոյ խաղաղ աւանդեց հոգին։

Մայր Տաճարի սպոյ զանգի ձայնը յայտնեց միաբանութեան և Վաղարշապատի հայ հաւատացեալներին նորին Սրբութեան մահան գոյցը։

Մեծ բազմութեամբ հաւատացեալներ՝ արք և կանայք, ծերք և տղայք զունդագունդ զալիս էին յարգանք մատուցանելու իրենց սիրեցեալ Հայրապետի ամփենին։

Ժամը 12-ին քաշած հեռացիրները ծաշնուցին աշխարհի ամեն կողմ ցրուած հաւատեան նոյն գոյցը։

Նոյն օրը երեկոյեան Հայաստանի առողջապահական կոմիսարիատի ներկայացուցիչ բժիշկները զալով յայտնեցին, որ կոտագարութիւնը ցանկանում է անզամհատել նորին Սրբութեան զին և զմոսել, քանի որ 10 օր պէտք է մնայ Հէնց այն գիշերը գեղորայք սրսկելով արիւնադարձ երակների մէջ, յաջորդ օրը Մայիսի 9-ին բացեցին միայն որովոյնը եւ մանրամասն քննեցին. (այս մասին արդէն ստացած կը լինէք Գեր. Խոր. չըջ. գրութիւնը, ուստի աւելորդ եմ համարում այսուեղ կրկնել)։

Մինչեւ թաղման օրը՝ Մայիս 18-ը, նորին Սրբութեան զին գրուած էր վեհարանի գահինում, ուր ամենայն օր առաւօտեան ժ. 11-ին կատարւումէր հոգենանց լիտուան բուն բազմութեան ներկայութեամբ, իսկ երեկոյեան ժամերգութիւնից յետոյ ամբիծք։ Մայր Տաճարում։

Մայիսի 17-ին կէսօրից յետոյ ժ. 4-ին սկսուեց զին վեհարանից տաճար փոխողբելու թափօրը։ Տասնեակ հազարաւոր ժողովուրգ, որոնք եկել էին մերձակայ և հեռաւոր գիւղերից և քաղաքներից, հարիւրաւոր քահանաներ և համայնքի ներկայացուցիչներ մասնակցում էին թափօրին արտասուրքն աչքերին։ Բազմութեան շատութեան պատճառով երեք ժամում հազիւ հնարաւոր եղաւ զագազը վեհարանից Մայր Տաճար իջեցնել, հանգիստները զընելով, Տաճարի շուրջը պատեցնելով։ Ամբողջ գիշերը Տաճարի զաները բաց էին և հաւատացեալները մօտենումէին սրբազնաւուր Հայրապետին վերջին հրաժեշտը տալու, սակայն շատերին հերթ չհասաւ մօտենալու զիակին։

Մայիսի 18-ին ուխտաւորների թիւը

կրկնապատկուց վանքի բակում, Տաճարում, տանիքների վերայ կանգնելու տեղ չէր մնացել։ (Ես նման բազմութիւն Ս. էջմիածնում յիշումեմ միայն Արքմեսոն Հայրիկի օծման օրը և վերջին միւսոնօրհնութեան ժամանակ)։

Բայտ աւանդութեան պատարագիչն էր Տեղակալ Խորէն Արքեպիսկոպոսը, որն օծեց նորին Սրբութեան զին և պատշաճ քարոզ խօսեց, սակայն մնձ ժխորի պատճառով անլսելի մնաց։

Բազմահազար ժողովրդեան մնձ իրարանցումի պատճառով շատ տեղերից նշանակուած ներկայացուցիչները անկարող եղան զամբանական խօսել։

Զանագան կողմերից եկած հարիւրաւոր քահանաների եւ պատզամուռների համար հոգեհաց էր պատրաստած միաբանական բնդարձակ սեղանատունը։ Այս տեղ Խորէն Արքեպիսկոպոսը խօսեց նորին Սրբութեան զործունէութեան մասին, թուելով մի քանի պատմական նշանակութիւն ունեցող գէպքեր։ Ապա Բազրատ Արքեպիսկոպոս, որպէս Եւրոպայի և Եգիպտոսի թեմերի ներկայացուցիչ խօսեց գրուատելով նորին Սրբութեան զործունէութիւնը։ Ապա խօսեցի նորին Սրբութիւնը իւր գնաւական միջամտութեամբ Երուսաղէմի Աթոռը փըրկեց այն մնձ վտանգից, որին ևնթակայ էր մինչև Օրմանեան Սրբազնի Երուսաղէմ ժամանելը։ Խօսեց նաև Գարեգին Արքեպիսկոպոսը, որ կ. Պոլսի պատրիարքութեան և Պարսկա Հնդկաստանի թեմի ներկայացուցիչ, յատկութէս ծանրանալով այն մնձ գէպքի վերայ, որ նորին Սրբութիւնը իւր գնաւական միջամտութեամբ Երուսաղէմի Աթոռը փըրկեց այն մնձ վտանգից, որին ևնթակայ էր մինչև Օրմանեան Սրբազնի Երուսաղէմ ժամանելը։ Խօսեց նաև Գարեգին Արքեպիսկոպոսը, որ կ. Պոլսի պատրիարքի ներկայացուցիչն էր։ Ի վերջոյ խօսեց մեր լեզուարան Ստեփանոս Մալխանեանը՝ Վըրաւոտնի Հայոց թեմի պատզամաւորը՝ բոլոր պատգամաւորների կողմից ցաւակցութիւն յայտնելով Գերազոյն Խորհրդին և Ս. էջմիածնի միաբանութեան մնձ կորուսի համար, որ սպով համակելէ ամբողջ հայութեան։ Նա յոյս յայտնեց, որ Գերազոյն Խորհուրդը կը կարողանայ Արքութեամբ առնել եկեղեցու բարձր զեկավարութիւնը, մինչև Տիրոջ օգնութեամբ կ'ընարուի նոր Գահակալ Ա. Լուսաւորչի Աթոռի։

Մանը ժամանակ ևնք ապրում մենք և դուք։ ծանր էին երկու կորուսաներն

միաժամանակ, որ սգով համակեց մեզ բռուրիս և մեզ հետ միասին նոու ամբողջ հայ ազգին։ Այս ծանր բռպէն մեզ բռլորիս վերայ պարտաւորութիւն է զնում ամենայն ոչարդութեամբ և հեռատեսութեամբ կը սպառագան և ապագան և աշխատիլ Ս. Կուսաւորչի Գոհի հասաւոտութեան և երկու առաքելական աթոռների Ս. Էջմիածնի և Երուսաղէմի վերայ բաղմեցնել արժանաւոր յաջորդներ։

Վերագոյն Հոգեօր Խորհուրդը Հայրապետի զին ամփոփելուց յետոյ ձեռնորկեց Ազգային-Եկեղեցական ժողով զումարելու խնդրին։

Ինչպէս լսում հնք, արտասահմանում սխալ տեղեկութիւն են տարածում իբր թէ Խորհրդային Կառավարութիւնը արգելք է յարուցանում Ազգային-Եկեղեցական ժողով զումարելու և Ամենայն Հայոց Կաթողիկոս լնտրելու մասին։ Սակայն դա չի համապատասխանում իրականութեանը, ուրովհետեւ։

1) Նորին Արքութեան մահուան երկրորդ օրը Հ. Հ. Ներքին Գ. Կորմիսսարը անձամբ գալու Ս. Էջմիածին յաւակցութիւն յայտնեց Նորին Արքութեան մահուան ասիթով և միաժամանակ հաւասարիացրեց, որ Կառավարութիւնը գէպի Ս. Էջմիածինն ու Հայոց Հայրապետութիւնը կորրելէ վերաբերմունք ունի և ցանկանումէ Հայրապետական Աթոռի Ս. Էջմիածնուում մնալը։

2) Մթերքների և առհասարակ անհրաժեշտ նիւթերի այս սուր պակասի ժամանակ Վերագոյն Խորհրդի դիմումը յարգեց և թաղման առթիւ անհրաժեշտ նիւթերը տրամադրեց։

3) Վերագոյն Խորհուրդը պաշտօնապէս զիմում անելով Հայուստանի Հանրապետութեան Կառավարութեան խնդրել էր. ա) թոյլ տալ Ազգ.-Եկղ. ժողով զումարել Ս. Էջմիածնում, բ) թոյլ տալ արտասահմանից եկող լնտրեալ պատգամաւորներին և եպիսկոպոսներին գալ անարգել մասնակցիլ Ազգ.-Եկղ. ժողովին և վերադաշնալ, գ) թոյլ տալ այս լնտրական ըրջանում թերթ հրատարակել Ս. Էջմիածնում և դ) թոյլ տալ արտասահմանի հայ թերթեր ստանալ, ծանօթանալու արտասահմանում արձարծուող մտքերի հետ։

Ներքին Գործոց Կոմիսսարը այս օրեւ-

րըս բանաւոր յայտնեց, որ Գեր. Հոգ. Խորհրդի յարուցած խնդիրները կտուավարութեան կողմից զբական լուծումն են ըստացել և գրուոր պատասխան կը տրուի, երբ Կողքը նախանձ կոմիտէի նախագահ Պ. Կասեանը կը վերագանուայ Մասնիվայից, ուր մասնակցումէ կուսակցութեան ԽՎՐԴ համագումարին։ Այս հրման վերայ Գեր. Հ. Խորհուրդը շուտով կ'ուզարկի իւր հրովարտակը լնտրութեան ժամանակը նըշանակելով սոյն տարուայ Հոկտեմբերի 26-ը, կցելով նաև 1925 թուին Նորին Արքութեան հաստատած Կանոնադրութիւնն եւ թէ ո՞ր տեղից քանի՛ պատգամաւոր է սպասում։

Ուրիմն ոչ միայն չպէտք է հաւատալ վերայիշեալ լուրերին, այլ պէտք է մաքառիլ և ամեն կերպ աշխատիլ որ բոլոր արտասահմանեան պատգամաւորները անշուշտ գան և մասնակցին Ազգ.-Եկղ. ժողովին և կաթողիկոսական լնտրութեան։

Վերջացնելով նամակս խնդրում ևմ ընդունեցէք իմ եղբայրական ողջագուրանքը եւ ցանկութիւնները՝ տեսնել ձեզ քաջառողջ և աննկուն ձեր պարտաւորութեանց կատարման մեջ։

Թող Ամենաբարձրեալ մխիթարէ ձեզ և մեզ և ոյժ ու կարողութիւն տայ տանելու մեզ բաժին հասած ծանրութիւնն ու վիշտը։

20 Յունիսի 1930 թ. Աղօթակից ձեր՝

Ս. Էջմիածին Մաքրես Արքապիսկոպոս



Ամենայն Հայոց Կարողիկոսին ընտրութեամ պայմաններուն եւ պարագաներուն վը-
րայ Մայր Արոռէն Գեր . Տեղապահ Խբա-
զանին ուղղուած պատօնազիրներուն պատ-
ճեններ :

Ինչպէս կ'եւելի այս պատօնազիրներէն Մայր Արոռոյ միաբան բոլոր եսլիկուորու-
նեւ կը նրախրուին անձամբ մասնակցիլ Ա-
մենայն Հայոց Կարողիկոսին ընտրութեամ :
Արդ սկզբունքով է որ Ս. Արոռիս միաբան
եսլիկուորունեւ խոկ առանձին առանձին նր-
ախրազիրներ ընդունած են :

Թ. 825

18 Յուլիսի 1930 ամի

Ա. ԷջՄԻԱԾՆԻ ՔՐԻՍՏՈՆԵԱԼՈՒ ՊՐ. ՅՈՒՅՑՆ

Գ. ԳԵՐԱԴՈՅՑՆ ՀՊԴԵԽՈՐ ԽՈՐՃՐԴՈՅՑՆ
Ա. ԷջՄԻԱԾՆԻ ՔՐԻՍՏՈՆԵԱԼՈՒ ՊՐ. ՅՈՒՅՑՆ

Տեղապահի Պատրիարքի Հայոց Ա. Եղու-
սակէմի, Գերապատի Տ. ՄԵՄՐՈՎ ԵՊԻՍԿՈ-
ՊՈՒՄ ՆՇԱՆԵԱԼՆ

Սրբազնագոյն Հայրապետն մեր, Ծայ-
րագոյն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն
Հայոց Տ. Տ. ԳԵՐՈՎ Ե-րդ, յիշ իննեւտա-
սաննամեայ Հայրապետութեան իւրոյ, ան-
քննելի կամօքն Աստուծոյ փոխեցաւ յառ-
աւեցաց յշ-ն Մայիսի այսր 1930 ամի, թող-
լով թափուր զ Աթոռ Կաթողիկոսութեան Ա-
մենայն Հայոց և զՄիաբանական Ուխտ Աըր-
րոյ Աթոռոյս ի վիշտս և ի տրտութիւնս :

Այսու Հրովարտակաւս կրկին ծանու-
ցանելով զայս զոյժ սպառիթ Զերումզ Գե-
րաշնորհութեան և ի ձեռն Զեր համօրէն հո-
գերականաց և բարեպաշտօն ազգայնոց
մերոց՝ ամենայն հաւատարիմ զաւակաց
Մրրոյ Կաթուղիկէ եղմիածնի, բնակելոց ի
քաղաքս և ի զիւղս Պատրիարքութեան Հա-
յոց Երուսաղէմի, Գերապոյն Հոգեոր Խոր-
հուրդո Մրրոյ եղմիածնի հրաւիրէ զԶերդ
Գերաշնորհութիւն և զմիաբանական Ուխտ
Մրրոյ Եկեղեցւոյ ուղղել զջերմազին զա-
զօթս և զմաղթանս առ Քահանայապետն Յա-
ւիտինից՝ Փրկին մեր Յիսուս հանուց ըստ
նատուրի Աւետարանական վարդապետու-
թեան և ըստ Եկեղեցական կարգաց սրր-
րոց Հարց և Ազգային-Եկեղեցական Ժողո-
վոց՝ ի պարծանս լրտութեան Ազգիս, ի պայ-
ծառութիւն և ի բարեկարգութիւն Եկեղե-
ցւոյ մերոյ Մրրոյ :

Հնագանդեալ կամաց Ամենախնամ Ա-
րարչին, յիտ ամփոփելոյ ի հող տապանի
զնշաբարս Հոգելոյս Հայրապետին մերոյ և
զինի հոգալոյ զարժանն զեղանակէ անսայ-
թաք առաջընթացութեան Հոգեոր և Եկե-
ղեցական գործոց, ըստ ներման հանդամո-
նաց, և ի նկատ առեալ, զի ընտրութիւն
նորոյ Կաթողիկոսի Ամենայն Հայոց պարտ
է լինել ոչ անպան քան զվեց ամիս ըզ-
կընի մահուանն, ըստ անօրէնութեան եր-
ջանկայիշատակ Տ. Տ. ԳԵՐՈՎ Կաթողիկոսի
և համաձայն 22-րդ յօդուածոյ Յատուկ Կա-
նանագրութեան, որ վասն գումարելոյ զԱզ-
գային-Եկեղեցական Ժողով, զոր հաստատ-
եալ է Հոգելոյս Հայրապետն ի կենդանու-
թեան խրում ի 22-րդում աւուր Հոկտեմ-
բեր ամսոյ 1925 ամի, ուստի Գերազոյն Հո-
գեոր Խորհուրդս անօրինեաց հասուցանել
զայս ի զիսութիւն Զերդ Գերաշնորհութեան
և հայ ժողովրդեան, որ ի շրջանի պատորի-
արքութեանդ կայ, և յանձն առնել տալ
ընտրել, ըստ սահմանեալ կանոնաց, յա-
տուկ իմն քրիստոնէական նախանձախնդրու-
թեամբ, հաւատով, սիրով և յուսով զմի
պատգամաւոր աշխարհիկ, իբրև զներկա-
յացուցիչ ի կողմանէ հայազնէից մերոց, բր-
նակելոց ի Պատրիարքական շրջանիդ, նաև
տալ ընտրել զմի ներկայացուցիչ ի կողմա-
նէ Արքագումար Միաբանութեանդ համա-
ձայն Յատուկ Կանոնագրութեան յաղագս
Ազգային Եկեղեցական Ժողովոյ :

Պարտ է ամենայն պատգամաւորաց
պատրաստ գտանիլ ասո՞ ի Մայր Աթոռոջ,
ի 26-րդ աւուր Հոկտեմբեր ամսոյ այսր 1930
ամի, վասն ընտրելոյ զարժանաւոր յաջորդ
Մրրոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի առ
ի կառավարել զԵկեղեցին Բիստոսի և պայ-
ծառացուցանել զՀայրապետականն Աթոռ,
որպէսզի ընտրեալ Պետ և Գլուխն Հայա-
տանեացց Ս. Եկեղեցւոյ վարեսցէ զՀայրա-
պետական իշխանութիւնն յամենային ըստ
անտուրի Աւետարանական վարդապետու-
թեան և ըստ Եկեղեցական կարգաց սրր-
րոց Հարց և Ազգային-Եկեղեցական Ժողո-
վոց՝ ի պարծանս լրտութեան Ազգիս, ի պայ-
ծառութիւն և ի բարեկարգութիւն Եկեղե-
ցւոյ մերոյ Մրրոյ :

Առաջի աշաց ունելով և կշռագատե-
լով զամենայն հանդամանս Հայրապետանեաց
Առաքելական Ս. Եկեղեցւոյս, նաև զազ-

դային-կրօնական, զբարոյական և գկանոնական պարտիս Կաթողիկոսական պատգամաւորաց հոգեւորականաց և աշխարհականաց հարազատ և հաւատարիմ զաւակաց Մայր Աթոռոյոյ, Գերագոյն Հոգեւոր Խորհուրդս յոյժ անհրաժեշտ համարէ զներկայութիւն Զերդ Գերդ Գերաշնորհութեան և պատգամաւորաց Հայոց Երուսալէմի աստ և զանմիջապէս մամնակցութիւն ի գործ ընտրութեան Ծայրագոյն Պատրիարքի - Կաթողիկոսի Ամենայն Հայոց և ի վճռահաստումն խնդրոց, յիշատակելոց յօրակարգի առաջիկայ Ազգային-Եկեղեցական Ժողովոյ:

Ներկայաւթիւն Զերդ Գերաշնորհութեան աստ ի Մայր Աթոռոջ, յԱզգային-Եկեղեցական Համագումարի, լիցի, արքարի, մըլիթարութիւն և ուրախութիւն վասն Գերագոյն Հոգեւոր Խորհրդոյս և միարանական Ուխտի Սրբոյ Աթոռոյոյ: Իսկ եթէ անհնարին լիցի այդ, յայն դէպէ բարեհաճեսչիք առաքել զնոգեւորական ներկայացուցիչ Զերդ:

Ի վերջ բանիցս Գերագոյն Հոգեւոր Խորհրդս հանդերձ միարանական Ուխտի Սրբոյ Էջմիածնի ջերմագին աղօթիւք առ Աստուած հայցէ զանսասանութիւն և զհաստատութիւն վասն Մայր Աթոռոյս և Բնորհանրական Հայրապետութեան Հայոց, ըզպայց առութիւն վասն Հայաստանի այց Ս. Եկեղեցւոյ, զյարատեւութիւն և զանշարժութիւն վասն Պատրիարքական Աթոռոյն Սրբոյ Երուսաղէմի, զինութիւն և զրարգաւաճումն վասն Հայաստան Աշխարհիս, զերջանիկ կեանս և զյաջողութիւն ամենայն բարենպատակ գործոց վասն ամենայն ժողովրդականաց հայազնէից, պահպանելով զամենսեան ընդ հովանեաւ ամենազօր Աջոյ Իւրոյ ի խաղաղութեան և յերջանկութեան, ամէն:

Տեղակալ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Նախագահող Գերագոյն Հոգեւոր Խորհրդոյ ԽՈՐԴԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՂՈՍ

Անդամք Գերագոյն Հոգեւոր Խորհրդոյ
ԲԱԳԻՐՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՂՈՍ
ՄԱՍԹԵԼՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՂՈՍ
ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՂՈՍ
ԳԵՂԻՐԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՂՈՍ

Շ Բ Զ Ա Բ Բ Ե Բ Ա Կ Ա Յ

ԲՈԼՈՐ ԹԵՄԱԿՈԱ, ԱՌԱՋՆՈՐԴՄԵՐԻՆ

Թ. - ՏԵՇ

18 Յուլիսի 1930 ամի

Ա. ԷՇՄԻԹՅԱՆԻ

Հանգուցեալ երջանկայիշատակ Տ. Տ.
Փէորդ Ե-րդ Բնորհանրական Կաթողիկոսի
թագման սպահանգէսը՝ ըստ ներման ժամանակի՝ ամենայն շուքով կատարելուց յետոյ՝ Հայրապետական Տեղակալի եւ Գերագոյն Հոգեւոր Խորհրդի էական հոգմն էր ջանք ու աշխատանք չը խնայել Հայրապետական Աթոռը երկար թափուր չը թողնէլ, այլ վեց ամսուայ ընթացքում գումարելով Ազգային-Եկեղեցական ժողով՝ ընտրել տալ Կաթուղիկոս ամենայն Հայոց, ինչպէս և Ազգային-Եկեղեցական Ժողով գումարելու Հայրապետահաստատ կանոնադրութեան 22-րդ յօդուածով նախատեսնուած է:

Այս է պահանջում հայ Եկեղեցու գերապոյն շահը:

Այսպէս խորհելով՝ Ամենապատի Տ. Տ. Տեղակալի և Գերագոյն Հոգեւոր Խորհրդի կողմից տարւոյս մայիսի 28-ին, թ. 454 գրութեամբ պաշտօնական դիմում եղաւ Խորհրդային Հայաստանի Կենտրոնական Պորձագիր կոմիտէի եւ ժողովրդական կոմիտարների Խորհրդի նախագահութեանց, որ թոյլատրուի գումարել Ազգային-Եկեղեցական Ժոկտեմբերի վերջութիւն:

Ս. Էջմիածնի Գերագոյն Հոգեւոր Իշխանութիւնը իր կենտրոնական խնդրի հետ արձարձել է նաեւ քանի մի կարեւոր հարցեր եւս, որոնք նպատակ ունին Ազգային-Եկեղեցական ժողովի գումարումը զիւրացրներու և ժողովը աղատ ու հեղինակաւոր դարձնելու, որոնք են՝ ա) Դիւրութիւններ ընձեռել՝ Խորհրդային պետական օրէնքով թոյլատրուած՝ պատուիրակների եւ պատգամաւորների ժողովներ գումարելու, բ) Երաշխատորել և դիւրացնել արտասահմանի պատգամաւորների աղատ մուտքն և ելքը Խորհրդային Հայաստան, չ) Ազգային-Եկեղեցական ժողովի օրակարգի հարցերի, որնք հոգեւոր բնոյթ ունին, Խորհրդային օրէնքով թոյլատրուած՝ աղատ քննութիւնն ապահովել, դ) Կաթողիկոսական ընտրութեան ըրջանում արտասահմանի բոլոր հոսանքների հայ Խերթերի ստացումն արտօ-

նել։ է) Նոյն շրջանում թողլատրել պարբերական հրատարակութիւն ունենալ՝ կաթողիկոսական ընտրութեան խնդիրների հետ առընչութիւն ունեցող հարցեր լուսաբանելու նպատակով։

Գերագոյն Հոգեոր Խորհուրդը ուրախ է այժմ հազորդելու բոլոր հայ թեմերի հոգեոր Խշանութեանց ու մարմիններին և նոցա միջոցով հայ հաւատացեալ ժողովրդովն ի միամտութիւն, որ արգէն ստացել է Խորհրդային Հայաստանի Կառավարութեան ոչ միայն բանաւոր հաւատիացումը Ազգային-Եկեղեցական ժողովի գումարման թոյլտրութեան և վերեւում լիշտակուած նորա արձարձած յարակից խնդիրների դրական լուծման մասին, այլ և նորա Յուլիսի 6-ի թ. 574 գրաւոր պատասխանը, որի վաւերական պատճենը այսու ուղարկեւումէ Միութենական և արտասահմանեան բոլոր թեմերին։

Ազգային-Եկեղեցական ժողովի օրակարգի հարցերն են։

Ա) Ընտրութիւն Ծայրագոյն Պատրիարք-Կաթողիկոսի Ամենայն Հայոց։

Բ) Ընտրութիւն Տեղակալի Ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք-Կաթողիկոսի։

Վ) Ընտրութիւն Ս. Էջմիածնի Գերագոյն Հոգեոր Խորհրդի անդամների։

Դ) Ազգային-Եկեղեցական Ասհմանագրութեան քննութիւնն և հաստատութիւնների։

Ե) Գեկուցում Հայոց Ազգային Եկեղեցու բարեփոխութեան մասին։

Զ) Ս. Էջմիածնի և նորա Հոգեոր, կըրթական ու կուլտուրական յարակից հաստատութիւնների նախահաշումի վաւերացում։

Գերագոյն Հոգեոր Խորհուրդը՝ ընդ սմին ուղարկելով նաև ընտրական հրովարտակը, առաջարկումէ, առանց յապաղման, կատարել պատգամաւորների ընտրութիւնը։

Ազգային-Եկեղեցական ժողովը՝ ըստ հնաւանդ նուիրական սովորութեան, որ կանոնական որոշման բնոյթ է ստացել, կը գումարուի Ս. Էջմիածնում։ Գերագոյն Հոգեոր Խորհուրդը խորապէս համոզուած է թէ՝ հա-

ւատացեալ հայ ժողովուրդը, որ միշտ նախանձախնդիր է Հայոց Հայրապետական գահի անսասանութեան և հեղինակաւորութեան՝ կ'աճապարէ ձեռնարկել պատգամաւորների ընտրութեան և իր ընտրեալ հեղինակաւոր պատգամամարներին կը պարտադրէ անձամբ ներկայ լինել Ազգային-Եկեղեցական ժողովին՝ ժողովի հեղինակութիւնը բարձրացնելու, օրակարգի հարցերի հեղինակաւոր լուծմանը նպաստելու և Ս. Էջմիածնի Հայրապետական գահը բազմեցնելու արժանաւոր Աթոռակալ, որ կարողանայ ներկայ համաշխարհային յեղյեղուկ և ծանր մոմենտին Ս. Էջմիածնի Բնոհանրական Հայրապետութիւնն և նրանով Հայ Եկեղեցին անսասան պահել, հայ Եկեղեցու միասնականութիւնը ապահովել և իր պատմական գերին հաւատարիմ մնալով՝ ի սիմբոս ցրուած վտարանդի հայութեան օգակել և ազգային ու բարոյական կուլտուրայի նեցուելն ու խթանը հանգիստանալ։

Գերագոյն Հոգեոր Խորհուրդը միանգամայն վատահ է, որ հայ հաւատացեալ ժողովուրդը ի նկատի կ'առնէ Էջմիածնի պատասխանաւութեան հանգամանքը և՝ խոհեմութեամբ ու հեռատեսութեամբ մօտենալով պատգամաւորական ընտրութիւններին՝ կ'ընտրէ խոհեմ և հեռատես անձինք, որոնք իրենց զերքի վեհութիւնն ու քաղաքական միջավայրի հոգեբանութիւնը կ'ըմբռնեն ու ըստ այնմ կը զեկավարուին՝ նպաստելով առաջիկայ Ազգային-Եկեղեցական հապաղ բանալու, օգտակար դարձնելու և խաղաղ գոցելու։

Ամենայն Հայոց Կաթողիկոսի Տեղակալ և նախագահող Գերագոյն Հոգեոր Խորհրդի՝ ԽՈՐԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԳԵՐԱԳՈՅՆ ՀՕԳԵՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ
ԲԱԿՐԱՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ՄԱՏԹԵՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ԳԵՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

(Պատմէն)

Հ. Ս. Խ. Հ.

Բ. Գ. յեւ Կ. Բ.

Պատգամավորական Խորհուրդների
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻԲ

Կ Ռ Մ Խ Տ Տ

6-6 Հուլիսի 1930 թ. 574

ՅԵՐԵՎԱՆ

ԳԵՐԱԴՈՒՅՑՆ ՀՈԴԵՎՈՐ ԽՈՐՃԻՒՆ
ԵԶՄԻԱԾ'ՆՈՒՄ

Հայաստանի ԱԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեից Նախագահի կարգադրությամբ ի պատասխան Գերագույն Հոգեկոր Խորհրդի 1930 թ. Մայիսի 28, Խ-454 գրության ՀՍԽՀ Կենդգործկոմի քարտուղարությունը հաջորդում է:

Ա) 1930 թ. աշնանը Եջմիածում կաթողիկոսի ընտրության համար գումարվելիք ընդհանուր յեկեղեցական ժողովը, ինչպէս նաև Կաթողիկոսի ընտրության հետեւանքով Հայաստանի ԽՍՀ սահմաններում պաշտամունքի գործոց պատզամավորները ընտրելու համար հավատացյալների ժողովներն ու համագումարները չեն հակառակ Հայաստանի ԱԽՀ Սահմանադրության 5-րդ հոգեգալին, վորի հիման վրա քաղաքացիների խորհրդականությունն ապահովելու նույնականությունը ընդունվումէ բոլոր անձանց կրօնական պրոպագանդայի ազատությունը:

Բ) Հավատացեալների վերոհիշեալ ժողովների ու համագումարների կազմակերպության ապահովումը գաշնակից մյուս հանրապետություններում, վորոնց սահմանադրությունների ունենալու համար ազատական հարաբեկությունը և ըստ պատկանելույն ուղարկվում է Զեր դիմումը:

Գ) Ռատարհապատակ հավատացյալների մուտքը ԽՍՀ Միության, ուստի նայել Հայաստանի ԽՍՀ սահմանները, վերոհիշեալ ժողովներին մասնակցելու համար, կարող ետեղի ունենալ ընդհանուր հիմունքներով այսինքն՝ ԽՍՀՄ միազոր ներկայացնեցությունների յեզ հյուպատոսարանների տրված իտուլությունը անցագրերի վրա նշանակված վիզաների ձեզով, նշած ուսար յերկրյա քաղաքացիների ԽՍՀՄ գալու իրավունքի

իրագործումը կապված եւ նրանց ազգային անցագրերով վիզա ստանալու հետ:

Դ) Խորհրդային յերկրում տարածվելիք տպագիր գրվածքների հրատարակության հարցերը կենտրոնացած են Գրառեպլիա-վարում, ըստ գորում մամուլի միջոցով քաղաքացիների կարծիքը արտահայտելու ազատությունը ապահովված է Հայաստանի ԽՍՀ Սահմանադրության 6-րդ հոգեվածով, Գրառեպլիավարի մարմինները չեն կարող արգելել կրօնական հարցերի վերաբերյալ տպագիր գրվածքների հրատարակությունը յեթէ միայն այդ գրվածքները մասնագորապես հակախորհրդային նպատակներ չեն հետապնդում:

Հայաստանի ԽՍՀ Կենտրոնական
Գործադիր Կոմիտեի Քարտուղար
(ստոր.) Գ. ՄՈՎԼՈՒՍՅԱՆ

Այս պատճենի հարադատութիւնը Գերագոյն Հոգեւոր Խորհրդը հաստատումէ սոսորագրութեամբ եւ Խորհրդի կնքով:
17-ն Յուլիսի 1930 թ. Ս. Ա. Էջմիածնի

Անդամ Գերագոյն Հոգեւոր Խորհրդի
(Անելք) Գիլիրի ԱՐՔԵՊԵԳԻՈՂՈՎՈՅՈՒ
Քարտուղար՝ Յ. Քոչարեան

Երուսաղեմի Պատրիարքական Տեղապահ
Գերագոյն

Տ. ՄԵԽՐԱՎ ՄՐԵՎԱԶՅԱՆ ԵՊԻՄԱԿՈՍԻՄԻՆ

Թ. — ՏԵԶ

22 Յուլիսի 1930 ամի

Ա. ԷԶՄԻԱԾ'ՆԻՆ

Գերագոյն Հոգեւոր Խորհրդը ընդ սմին ուղարկումէ Զեր Գերագործութեան տարւոյի հոկտեմբերի 26ին գումարուելիք Աղգային-Եկեղեցական ժողովի օրակարգի եւ յարակից խորհրդների վերաբերութեամբ բոլոր թեմակալ Առաջնորդներին ուղարկուած ըրջարերականը, որին կցուած է Խորհրդի գիմումի առթիւ Հայաստանի Կառավարութեան տուած գրաւոր պատասխանի վաւերացրած պատճենը:

Եղբայրական սիրոյ ողջոյններով
Անդամ Գերագոյն Հոգեւոր Խորհրդի
ՄԱՍԹԵՂՈՍ ԱՐՔԵՊԵԳԻՈՂՈՅՈՒ

Քարտուղար՝ Յ. Քոչարեան

Երևանի Պատրիարքական Տեղապահ
Գերաքնօքանի

S. ՄԵԽԻՐՈՓ ԱՐԲԱԶԱՆ ԵՊԻՄԱՌՊՈՅԻՆ

Թ.— 870


22 Յուլիս 1930 ամի

Ս. Էջմիածնի

Գերագոյն Հոգեոր Խորհուրդը ներփակ
ուղարկելով Ձերդ Գերաշնորհութեան Հայ-
րապետական ընտրութեան հրովարտակներ
յանուն S. S. Բարգէս Եպիսկոպոս Գիւլե-
սերեանի, Մկրտիչ Եպիսկոպոս Աղաւանու-
նու և Մատթէս Եպիսկոպոս Դայրէչեանի,
խնդրում է նեղութիւն կրել յանձնելու ըստ
պատկանելեաց :

Եղբայրական սիրոյ ողջոյններով
Անդամ Գերագոյն Հոգեոր Խորհրդի
ՄՍԾԹԷԾՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Քարտուղար Յ. Քոչարեան



ի Կուլկաթա-Հնդկաց,
յ 12 Դեկտեմբերին 1929:

Առ պատուական խմբագրութիւն «ՄԻԱՆ»
Կրօնարերին, ի Սուրբ վանս Յակովիանց,
Երուսաղէմ:

Գոհ եղեց յոյժ եթէ ազգասիրաբար
չնորհ արասցիք հրատարակել յէջս պատ-
ռական ամսաթերթիդ՝ դպտաճեն սրբա-
տառ կոնդակի Վեհափառ Հայրապետին
Հայոց առ իմո նուաստութիւն յաւուր քա-
ռասնամեմեայ Գրական Յորելինիս որ տօնե-
ցաւ թէ աստ ի Կալկաթա և թէ անդ ի ցան-
կալի ճնողագոյրին իմում ի Նոր - Զուգա՝
ի և նոյեմբերին անցեալ 1929 ամին:

Կից ընդ օրհնասարք կոնդակի Վեհա-
փառին առաքեմ և զպատճեն հեռազրին
զոր Արբազնասուրբ Կաթողիկոսն Ամենայն
Հայոց առաքեալ էր ի Հնորհաւորութիւն
Յորելինիս, օրհնութեամբ հանդերձ: Առա-
քեմ նոյնպէս և զօրինակ զրութեան «Գե-
րագոյն Հոգեոր Խորհրդին» զոր ստացայ
ընդ կոնդակին:

Կոնդակ Վեհափառին ընթերցեալ եղե-
ի Նազարեթայ սուրբ եկեղեցւոջ մերում
տատ յաւուր կիրակէի որ էր «Կարմիր Կիւ-
րակէի» 7 Ապրիլին անցելոյ՝ ի լուր բազ-
մաթիւ ժողովրդեան որք եկեալ էին յատ-
կապէս լոել զբանս կոնդակին՝ զի զուն ու-
րեք ընթերցեալ լինին կոնդակք Հայրա-

պետականք աստ ի Կալկաթա ուր գտանին
յաղգէս, ըստ մեծի մասին Նոր - Զուգա-
յեցիք:

Կանխաւ մատուցանելով Զեղ զշերմ
չնորհակալիս իմ վասն բարեհանձ ընդու-
նելութեան խնդրանաց, պատիւ անձին:
համարիմ, զալ և մնալ, միշտ ամենախո-
նարհ ծառայ Զեր:

Մեսովլի Յ. Ակրեանց

Յ. Գ.

Ներփակի ի սմին առաքեմ և գրախօսա-
կան մի զրեալ ի Պարոն Արտաշէսէ թ. Աւ-
լահիկէրդեան, մի ի Հայ ուսուցչացն «Եմար-
դասիրական Ժեմարանին» քաղաքիս, յա-
ղագս իմոյ անզլլերէն բանախօսութեան
ի կամառի «Պատմմարտանից Հնդկաստանի»
զկենաց և զգործոց խօջայ Պետրոսի Յա-
րութիւնեան հայկազն դիւագէտին որ ի
մեծի ճգնաժամուն անզլլացւոց աստ ի
Բանգուլա, յամին 1756, խողաց յոյժ կա-
րեռոր գեր իմն յօգուտ զուռզ որգուցն Աւ-
րիսինի՝ զուռզ այր ազգեցիկ և հեղինակա-
ւոր ի զրուն իշխանացն նոհանգիս ուսո-
տի և անհրաժեշտ վասն ազուրիսուցն անզ-
լլոյ: Գոհ եղեց յոյժ եթէ ազգասիրաբար
հիւրընկալչիք յէջս պատուական Սիմենի ի
քաջալերսկանակ զրողին (*):

Մ. Յ. Ս.

Պատման նեռագրին սացեալ ի Վեհափառ
Հայրապետէ ի շնորհաւորութիւն Յորելինին:

Էջմիածին
31 Հոկտեմբեր, 1928

Վարդանեան,

Ճեմարան Հայոց,
ի Կալկաթա:

Շնորհաւորում ենք Մեսովլի Սէթեանի
զրական կրթական ազգօգուտ զործունէ-
ութեան Յորելինեանն, օրհնում ենք Յորել-
իարին:

Գեորգ Կարսովիկոս Ամենայն Հայոց
Մահօրութիւն: — Հեռագիրն զրեալ էր Հա-
յերէն՝ սրպէս ի վեր, այլ լատին տառիք,
ըստ սովորականին:

Պարոն Վեհափառ Վարդանեան էր քար-
տուղար Յորելինական Յանձնախումբին:

Մ. Յ. Ս.

(*) Այս Մատենախօսականը կը նրանակուի Սիմենի
յաջորդ քիւմին մէջ:

Պատման գրութեան և Գերազոյն Հոգիուր
հորմանցի և առաջնալ ընդ սրբաւաղ Կոնցակի
Վեհապատին:

Թ. 556

4 Նոյեմբեր, 1928 ամի

Ս. ԷԶՄԻՋԱՅԻՆ

Մեծարգոյ Յորելեար

Պ. Մեսրովբայ Յ. Սէթեանց

Ամենայն Հայոց Վեհապատ Կաթողիկոսը Հոկտեմբերի 31-ի հետաքրով չնորհաւորեց Զեր քառասնամեայ քրական և կրթական գործունէութեան Յորելեանը, որի տոթիւ այսօր ուղարկուեց նաև Հայրապետական օրհնառաք Կոնդակը Զեր առունով, յարդելի Վիքիթօր Վարդանեանի հասցեով:

Գերազոյն Հոգեկոր Խորհուրդը եւս ի սրտէ չնորհուորելով Զեր քառասնամեայ օգտաւէտ գործունէութեան Յորելեանը, մաղթում է յարգելի Յորելեարիդ երկար և երջանիկ կեանք և կոտարեալ յաջողութիւն Զեր ձեռնարկած բոլոր ազգօգուտ և բարի գործերի մէջ:

Անդամ Գերազոյն Հոգեկոր Խորհրդի՝
Խորեն Արքայիսկուպոս
Դիւանապետ՝ Ռուբեն Եպիսկոպոս
Քարտուղար՝ Յ. Քոչարեան

Պատման Կոնցակին Վեհապատ Հայրապետին առ Յորելեան Մեսրով Յ. Սէթեանց որ ի Կալկարա:

Գլուխ ծառայ Յիսուսի Քրիստոսի և անհասանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ և Կաթողիկոս Ամենայն Հայոց Մայրապետն Պատրիարք համազգային նախամեծար Աթոռոյ Արքատեան առաքելական Մայր Եկեղեցւոյ Սըրոյ Էջմիածնի:

Մեծարգոյ Պ. Մեսրովբայ Յ. Սէթեանց՝
Հարազատ որգույ Մայր Աթոռոյ՝ ողջոյն
և օրհնութիւն Հայրապետական.

Քաջայալու են Զեր, սիրելի որդեակդ հոգեկոր, ամենայն պատմութիւնք անձից անցելոց վատարանդի Հայոց ի Հնդիկ, զորս մանրակիւտ հետազօտութեամբ ի լոյս ածեալ է Զեր և այժմ ևս շարււնակէք ուսումնասիրել և ի յայտ բերել զգործու եւ զարժանիս Խոցին: Արդէն իսկ զիտէք եթէ որպիսի հանրօգուտ գործունէութեամբ բազումք ի նոցանէ զինքեանս երեկիս կար

ցուցին յաչս ազգայնոց մերոց և օտարաց ի զանազան ասպարէզու:

Նոքա եղեն, զի ի զարս անցեալս հիմնարկեցին զրազում եկեղեցիս և զազգային կրթարանս, սկիզբն արարին անզրանիկ լրացրութեան մերոյ ի Մաղրաս քաղաքի Հնդկաց, հաստատեցին և բարգաւաճ արարին զՄարտպատրական ձեմարան Հայոց ի Կալկարթայ քաղաքի, որ առուել քան զի զար լուսաւորէ և զաստիարակէ զմանկունս Հայոց: Արգիտական սիլով և ջերմեանդ զգացմամբ շաղկապեալ ի մի առ Մայր Աթոռու Սուրբ Էջմիածին, հանապազ ջոնային ըստ հնարաւորութեան ի կատար ածել զբարայտական պարտիս իւրեանց առ ազգն մեր և Հայաստանեայց Սուրբ Եկեղեցին առատաձեռն բարեզործութեամբ իւրեանց:

Հանապազ յիշելով օրհնութեամբ զայս ամենայն բարեմանութիւնու և զազգօգուտ զործունէութիւնս նախնեացն Հնդկահայոց, միմիթարեալ մինիմք զարգիս ի սիրտ և ի հոգի, յորդամ աեղեկանամք և խմանամք, զի ի ժառանգս և ի յաջորդս նոցա զո՞ն անձինք, որք զարժանաւոր նախնեաց իւրեանց զնմանութիւն յինքեանս բերելով, կատարեն սրտեանդն ոգւով զօրբալոն պարտիս իւրեանց առ ազգն մեր, առ Հայրենիս և առ Մայր Աթոռու Ս. Էջմիածին:

Եւ զմինն յայդպիսեաց արժանաւորաց ի հեռաւոր զաղթավայրիդ զջեկ զիտեմք, սիրելի զաւակդ մեր հոգեկոր, քանզի Դուք՝ յընթացս քառասնից ամաց, փայլեալ էք զրական վաստակօք Զերսկը և արդիւնաւէտ զործունէութեամբ յանդաստանի ազգային կրթութեան և զրականութեան: Աւսահ զոհունէակութեամբ սիրտի իրադեկ եղաք, զի յայսմ աւուր՝ ի գ նոյեմբեր ամսոյս, կատարի քառասնամեայ Յորելեան, հանրօգուտ զործունէութեան Զերոյ:

Ընկալարութք, որդեակդ սիրելի, զօրհնութիւնս բազմափիշտ Հայրապետիս հանուր Հայոց՝ ի Մայր Աթոռոյս Սըրոյ Էջմիածնի:

Ընկալարութք, վաստակաւոր մշակդ ազգիս, զՀայրական զոհունակութիւնն և զշնորհաւորութիւնն մեր յափանց Մայր Արքասի և ի ստորածից վեհապանձ ալեւոր Մասեաց:

Եւ այսու Հայրապետական Կոնդակաւու

որհնելով զՁեզ, զվաստակս և զմեղուաջան աշխատանո Ձեր, մաղթեմք ի Տեառնէ պարզեել Ձեզ առողջութիւն և երկարակեցութիւն գասն ազգօգուտ զործունէութեան, պահպանել և զօրացուցունէլ զՁեզ ի հայրենասիրութեան, յազգասիրութեան և ի զորդու բարիու:

Ալջ լեբուք, զօրացեալ չնորհօք Առուբը Հոգւոյն և յաւէտ օրհնեալ ի մէնջ, ամէն: Վշտալի Գլուխու Ե. ԿԱՅԹՈՂԻԿՈՍ ԵԽ ՆՍՅՐՈԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ:

Ի 4 Նոյեմբերի, 1928 ամի,

ըստ տոմարիս ԱՅՑԲ,

ի Հայրապետութեան մերում Ամ. Հայոց Ժի ամի,

ԴՅՈՒՅԹՐԱՄԵԱՆ Մ. Աթոռ Ս. Էջմիածնի,

ի Վաղարշապատ:

Թ. 517

ԿԱՅԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ԿԱՅԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ԵՒ ՌԻՍՈՒՄՆԱՐԱՆ ԱՆԹԻԼԻԱՄԻ ՄԷՋ

1915-էն ի վեր կիլիկիոյ կաթողիկոսութիւնն ալ, Թիւրքիոյ բովանդակ հայութեան հետ, զրկուած իր բոլոր բնիկ, հաստատուն և պատմական զիւրութիւններէն, եղաւ թափառական և բարբարական, եւ վէհափառ ու ալեփառ Սահակ Ս. Կաթողիկոսը չկորսնցուց իր հաւատքը, վերակազմելու համար իր Աթոռը կաթողիկոսարանով և ուսումնաբարանով:

Քանի որ Սիւրբիոյ ասպնջական հոգին վրայ համախմբուած էին բիւրուոր Հայեր կիլիկիայէն և հայաբնակ ուրիշ քաղաքներէն, հարկ անհրաժեշտ էր այդ ըրջանակին մէջ կազմակերպել ամէնէն յառաջ կաթողիկոսական թեմը. և այս առաջին քայլը յաջողեցաւ յաւէտ ողբացեալ Ամեն. Դուրեան Եղիշէ Ա. Պատրիարքին իմաստուն կարգադրութեամբ և Ս. Յակոբայ Պարմէն. Միաբանութեան բարեհացակամութեամբ, որուն հետեւանքով Երուսաղէմի Աթոռին հօգևոր իրաւասութիւնը Պերութի, Շամի և Լաթաքիոյ ըրջանակներուն մէջ, փոխանցուեցաւ կիլիկիոյ Աթոռին, և վեհ. Սահակ Կթզս. կարող եղաւ ստեղծել առաջնորդական երեք նոր թեմեր, ու-

րոնք աւելինալով արգէն կիլիկիոյ Աթոռին պատկանող Հալէպի և Կիպրոսի թեմերուն վրայ, հինգ թեմեր կազմակերպուած եղան եպիսկոպոսական աթոռներով:

Երկրորդ առնելիք քայլն էր Կաթողիկոսարանի համար համար հաստատուն տեղ մը գտնել:

Հալէպին էր կաթողիկոսանիստ քաղաք ըլլալու իրաւունքը. որովհետեւ սկիզբէն ի վեր Սիւրի հետ և անոր հաւատքը զիւրք ունեցաւ Հալէպ: Թէ կիլմայի և թէ քաղաքական պատճառաներով մանաւանդ կիլիկիոյ կաթողիկոսները Հալէպ կը նստէին յաձախ, այնպէս որ Հալէպի Քառոսուն Մանկունք եկեղեցին տեսած է կաթողիկոսական և եպիսկոպոսական ձեւնադրութիւններ և օծումներ, սրբալոյս Միւսոնի օրհնութիւններ, իսկ բուն մատուոը՝ Քառասուն Մանկանց այդ եկեղեցւոյն մէջ՝ եղած է նաև գամբարան կաթողիկոսներու և եպիսկոպոսներու: Բայց 1915-էն ետքը, Սիւրբիոյ մէջ քաղաքական պայմաններու նորագոյն զասաւորման հետեւանքով Պերութի խլեց առաջնութիւնը՝ դառնալով բովանդակ Սիւրբիոյ հօգատար կառավարութեան կեղրոն, ինչպէս նաև Լիբանանի հանրապետութեան մայրաքաղաք, և Հալէպ մնաց ետեւ, թէև ամէնէն մեծ հայտնակ քաղաքն է:

Սիւրբիա իսկապէս կրօնական երկիր մըն է բազմաթիւ յարանուանութիւններով, որոնց բոլոր հօգեսոր պետերը Պերութին հաստատած իրենց Աթոռները. և իրերու բնական բերմունքով կիլիկիոյ Աթոռն ալ պիտի հաստատուէր Պերութ, և ասիւկա փափաքն էր նաև Բարձր Թօմիսէրութեան: Բայց Պերութի մէջ չը կար յարմար տեղ կաթողիկոսարան ընկերու համար:

Անթիվասի մէջ Նիյր Խարի որբանոցի շէնքերուն կիլիկիոյ կաթողիկոսութեան սրբազգրութիւնը հնարաւորութիւն տուաւ վէհ. Սահակ Կթզս. որ կաթողիկոսարանն ալ կազմակերպուի հոն իր ուսումնաբանին հետ:

Անթիվասի շէնքերը կիլիկիոյ կաթողիկոսութեան արամագրող պայմանագրութիւնը ստորագրուեցաւ Պերութի մէջ, 1930 Ապրիլ 7-ին, Նիյր Խաթի Քարտուղար Մը. Պարքէյ Եշիսընի և կիլիկիոյ Վէհ. Սահակ Կաթողիկոսի կողմէն, զայն իրեն